ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

1.06.2020
345-48

ՀՀ առողջապահության նախարար
պարոն Արսեն Թորոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Թորոսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ըստ պաշտոնական տվյալների՝ մայիսի 31-ի դրությամբ ՀՀ-ում ընդհանուր առմամբ իրականացվել է Նոր կորոնավիրուսի 58065 թեստ: Ներառո՞ւմ են արդյոք այդ տվյալները մասնավոր լաբորատորիաներում քաղաքացիների միջոցներով իրականացրած թեստերի տվյալները:
2. Եթե այո, ապա խնդրում ենք տեղեկացնել, թե առ 2020թ. մայիսի 31-ի դրությամբ արված թեստերից քանի՞նս են արվել պետական բյուջեի միջոցներով, քանի՞սը քաղաքացիների միջոցներով՝ մասնավոր լաբորատորիաներում:
3. Հնարավո՞ր է արդյոք այսուհետ հրապարակվող վիճակագրության մեջ առանձնացված ներկայացնել, թե թեստերից քանիսն են արվել պետական բյուջեի, քանիսը՝ քաղաքացիների միջոցներով:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան